«ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» 2018 թվականի հունիսի 13-ի ՀՕ-336-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «դատարանի» բառը փոխարինել «դատավորի» բառով:

2) 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մաս.

«3.Դատական ծառայության պաշտոններն են՝ դատավորի օգնականի, դատավորի գործավարի և դատական նիստերի քարտուղարի պաշտոնները, ընդ որում՝ դատավորին կցված դատական ծառայության պաշտոններն են՝ դատավորի օգնականի և դատավորի գործավարի պաշտոնները»:

Հոդված 2. ՈՒժը կորցրած ճանաչել օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը:

Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) ուժը կորցրած ճանաչել 1-ին մասի 1-ին կետը

2) ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասը:

Հոդված 4. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում «4-6» թվերը փոխարինել «5-6» թվերով:

2) ուժը կորցրած ճանաչել 4-րդ մասը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: